

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) «գիտական աշխատող» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ճարտարագիտատեխնիկական աշխատող» և «գիտամանկավարժական աշխատող» կետերով.

«ճարտարագիտատեխնիկական աշխատող՝ գիտական կազմակերպությունում կամ բուհում գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացմանը նպաստող և գիտական արդյունքի ստեղծման գործընթացում ներգրավված անձ.

գիտամանկավարժական (գիտակրթական) աշխատող՝ պետական հավատարմագրում անցած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսական կազմի աշխատող, որն իրականացնում է նաև գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն.».

2) «գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություն» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գիտական դրամաշնորհ» և «գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ» կետերով.

«գիտական դրամաշնորհ՝ Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կամ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին

գիտական հետազոտությունների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող ֆինանսական կամ այլ միջոցներ.

գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ՝ տվյալների հավաքման, վերլուծության և տեղեկատվության տարածման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ներառում է տեղեկություններ գիտական կազմակերպությունների, դրանց ենթակառուցվածքների, կառավարման, տնտեսական և հետազոտական գործընթացների, ինչպես նաև աշխատողների (այդ թվում՝ ոչ գիտական) մասին, և որի միջոցով կազմակերպվում է պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման ամբողջ գործընթացը:»:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածում 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «գ» կետով.

«գ) անցնել ատեստավորում՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հավաստման նպատակով:»:

**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ մասով.

«9. Կառավարությունը հաստատում է պետական գիտական կազմակերպությունների տեսակները, դրանց կառուցվածքներին ներկայացվող պահանջները և դասակարգման չափանիշները՝ ներառյալ կատարողականի ցուցանիշները:»:

**Հոդված 4.** Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ՀՀ ԳԱԱ» բառերը փոխարինել «Ակադեմիա» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2-4-րդ մասերով.

«2. Ակադեմիայի կանոնադրությունը՝ ներառյալ կառավարման և գործունեության առանձնահատկությունները, համակարգում ներառված կազմակերպությունների ցանկը և դրանց կանոնադրությունները հաստատում է կառավարությունը:

3. Ակադեմիան իր կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է կառավարման խորհուրդ՝ ներառելով Ակադեմիայից, կրթության, գիտության և էկոնոմիկայի ոլորտների լիազոր մարմիններից առաջադրված ներկայացուցիչներ, որի միջոցով իրականացնում է համակարգի կազմակերպությունների ընդհանուր

կառավարումը, այդ թվում՝ կազմակերպությունների կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կառավարման մարմինների ձևավորումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

4. Ակադեմիան ունի ղեկավար կազմ, որն իրականացնում է ակադեմիայի գիտական, գիտատեխնիկական և գիտաօժանդակ գործունեության ընթացիկ ղեկավարումը: Ղեկավար կազմի մեջ մտնում են Ակադեմիայի նախագահը, փոխնախագահը, ակադեմիկոս քարտուղարը, նախագահի տեղակալները և բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարները: Ակադեմիայի ղեկավար կազմում ընդգրկված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե լրացել է նրա 75 տարին:»:

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «,«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «և գիտալուսավորչական» և «գիտությունների հասարակական ակադեմիաներ,» բառերը.

2) 2-րդ մասից հանել «ներառյալ՝ գիտությունների հասարակական ակադեմիաներին,» բառերը:

**Հոդված 7.** Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի վերջին պարբերությունում «ԳԱԱ» բառը փոխարինել «Ակադեմիայի» բառով:

**Հոդված 8.** Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. «բ» կետում «հայագիտության» բառից հետո լրացնել «և գիտության այլ բնագավառների» բառերը,

բ. «է» կետում «կարգի» բառը փոխարինել «կարգերի» բառով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժ» կետով:

«ժ) Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցի հաստատումը:»:

3) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենքի 15.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Հոդված 15.1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն**

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ղեկավարում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահը:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն՝

1) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունն ու բարձրագույն կրթության և գիտության բնագավառների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծեր.

2) իրականացնում է բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման նկատմամբ վերահսկողություն.

3) մասնակցում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգերի մշակմանը.

4) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը.

5) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգը.

6) մշակում և հաստատման է ներկայացնում առկա, հեռակա, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստենսիտի) ձևերով ուսուցման կարգերը.

7) մշակում և հաստատման է ներկայացնում հավատարմագրման կարգը, ներառյալ՝ չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետը.

8) համապատասխան մարմինների հետ աշխատաշուկայի վերլուծության արդյունքներով առաջարկություններ է ներկայացնում յուրաքանչյուր ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություններին հատկացվող կրթական տեղերի վերաբերյալ՝ ըստ կրթության մակարդակների, կրթաձևերի և կրթական ծրագրերի.

9) մասնակցում է մասնագետների պատրաստման, աշխատողների և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և

վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ձևավորմանը.

10) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատություններում պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկը և քանակը, ինչպես նաև սահմանված կարգով ապահովում է համապատասխան ուսանողների նպաստի փոխհատուցումը.

11) մշակում և հաստատման է ներկայացնում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը.

12) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի դիմորդների ընդունելության կարգը, ներառյալ՝ գիտելիքների ստուգման ու գնահատման միասնական համակարգն ու սկզբունքները.

13) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրի ընդունելության և ուսուցման կարգերը.

14) մշակում և հաստատման է ներկայացնում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգերը.

15) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգերը.

16) մշակում և հաստատման է ներկայացնում միջին որակական գնահատականի հաշվարկման մեթոդաբանությունը.

17) մշակում և հաստատման է ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը.

18) մշակում և հաստատման է ներկայացնում գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների ծրագրեր.

19) մշակում է գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային, ինչպես նաև միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրեր և կազմակերպում է դրանց իրականացումը.

20) մշակում և հաստատման է ներկայացնում գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրեր, գիտական կադրերի պատրաստման նպատակով իրականացնում է ուսումնասիրություններ և ներկայացնում է առաջարկություններ պետական պատվերի ձևավորման վերաբերյալ.

21) մշակում և հաստատման է ներկայացնում առաջարկություններ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ.

22) մշակում և հաստատման է ներկայացնում գիտական և գիտատեխնիկական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) բնագավառի իրավական ակտերի նախագծեր.

23) սահմանում է փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջները.

24) մշակում և հաստատման է ներկայացնում փորձաքննության բնագավառում պետական հավատարմագրման կարգը և չափանիշները.

25) մշակում և հաստատում է պետական փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերը.

26) փորձաքննության բնագավառում կնքում է միջազգային համագործակցության պայմանագրեր.

27) կազմակերպում է գիտության և արտադրության ինտեգրմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը.

28) սահմանված կարգով մասնակցում է բարձրագույն կրթության և գիտության բնագավառների հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը.

29) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներուժի համախմբմանն ուղղված ծրագրեր.

30) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի,

տեղեկանքների և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքված տվյալների ու տեղեկությունների հիման վրա՝ սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարում.

31) կազմակերպում է ռազմատեխնիկական ծրագրերի մշակումը, փորձաքննության և իրականացման մոնիտորինգի (մշտադիտարկման) կազմակերպումը՝ Ռազմարդյունաբերական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների հետ.

32) մշակում և հաստատում է գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի վարման կարգը, դրա հիման վրա իրականացնում է գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքում, գիտաչափական վերլուծություն, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորում և վարում.

33) իր իրավասության սահմաններում իրականացնում է բարձրագույն կրթության և գիտության բնագավառների բյուջետային գործընթացը.

34) ապահովում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը և դրանց աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի ու չափանիշների մշակումը.

35) կազմում և համապատասխան նախարարի հաստատմանն է ներկայացնում այն գիտական մասնագիտությունների անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ.

36) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական աստիճանները՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը.

37) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական կոչումները՝ հիմք ընդունելով բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհուրդների որոշումներն ու գործի ուսումնասիրությունը.

38) նախկին ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրերի հիման վրա հանձնում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրեր.

39) համապատասխան նախարարին ներկայացնում է եզրակացություն օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի վկայագիրը

Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրին համապատասխանեցնելու մասին.

40) համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ.

41) կազմակերպում է ատենախոսությունների և սեղմագրերի պահպանումը.

42) կազմակերպում է տեղեկագրերի հրատարակումը.

43) մշակում և հաստատում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգը.

44) մշակում և հաստատում է ատենախոսությունների արդյունքներն ու դրույթները հրապարակելու համար սահմանվող գիտական պարբերականների ցուցակում ընդգրկվելու չափանիշները.

45) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորությունները, ինչպես նաև իր կանոնադրական գործառույթներն ապահովելու նպատակով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն կարող է ստեղծել մասնագիտական փորձագիտական խորհուրդներ, մրցութային հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, ինչպես նաև կարող է ձևավորել մասնագիտական և խորհրդակցական մարմիններ՝ հաստատելով դրանց աշխատակարգը և անվանական կազմը:»:

**Հոդված 10.** Օրենքի 15.2-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 11.** Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» կետից հանել «մասնագիտական որակի» բառերը.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գիտական կադրերի ատեստավորման կարգը, պետական գիտական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատում է կառավարությունը:»:

**Հոդված 12.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «, գիտության ոլորտում աշխատանքային ստաժի» բառերը.

2) 2-րդ մասում «լրացուցիչ վարձատրությունից» բառերը փոխարինել «հավելավճարից» բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1 մասով.



«2.1. Գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճար տրամադրվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և աշխատանքի լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող գիտական աշխատողներին, որի տրամադրման չափը և կարգը սահմանում է կառավարությունը:».

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Պետությունը գիտական կազմակերպությունում և բուհում գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 30 տարվա ստաժ ու գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարում առնվազն ութ տարի սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված գիտական աստիճանի համար հավելավճար ստացած անձանց 70 տարին լրանալու ու պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված չլինելու դեպքում տալիս է ամենամսյա դրամական վճար՝ սույն մասում նշված ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով:».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 մասով.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ամենամսյա դրամական վճար նշանակելու համար դիմելու, ամենամսյա դրամական վճար նշանակելու և վճարելու կարգը սահմանում է կառավարությունը, իսկ ամենամսյա դրամական վճար նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ ամենամսյա դրամական վճար նշանակելու լիազորություն ունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը:»:

**Հոդված 13.** Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի «գ» կետում «պայմանագրային (թեմատիկ)» բառերը փոխարինել «գիտական դրամաշնորհային» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով.

«5. Կառավարությունը հաստատում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևերով պետական ֆինանսավորման կարգերը, որոնք նկարագրում են ֆինանսավորման ամբողջական գործընթացը, գիտական և գիտատեխնիկական

փորձաքննության տեսակները և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման գործիքները:»:

**Հոդված 14.** Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.

«1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով մրցութային ծրագրերի շրջանակներում արտերկրի կենտրոններում մեկ ամսից ավել տևողությամբ մասնագիտական վերապատրաստման նպատակով գործուղումների համար օրապահիկի և գիշերակացի փոխհատուցման արժեքները սահմանվում են մրցույթի պայմաններով:»:

**Հոդված 15.** Սույն օրենքի 3-րդ հոդվածով 6-րդ հոդվածը նոր լրացված 9-րդ մասով, 4-րդ հոդվածով 8-րդ հոդվածը նոր լրացված 2-րդ մասով, 8-րդ հոդվածով 14-րդ հոդվածի 1-ին մասը նոր լրացված «ժ» կետով, 11-րդ հոդվածով 17-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրված 3-րդ մասով, 12-րդ հոդվածով 19-րդ հոդվածը նոր լրացված 2.1-ին և 3.1-ին մասերով, 13-րդ հոդվածով 23-րդ հոդվածը նոր լրացված 5-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը:

**Հոդված 16.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4.4-րդ մասին հաջորդող պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝

- 1) 1-ին կետից հանել «մշակումն» բառը.
- 2) 3-րդ, 9-րդ և 12-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-260-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 9-րդ կետում «Գիտության» բառը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության» բառերով.

2) 15-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Գիտության կոմիտեն և Բարձրագույն որակավորման կոմիտեն միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝ իր գործունեության ոլորտին վերապահելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության Գիտության կոմիտեի, Բարձրագույն որակավորման կոմիտեի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության գործառույթները:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատվում է սույն օրենքով վերակազմակերպված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նոր կանոնադրությունը, և կատարվում են սույն օրենքի ընդունումից բխող այլ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ:

4. Գիտության կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրության հաստատումը և մարմնի ղեկավարի նշանակումը:

5. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, Գիտության կոմիտեին ու Բարձրագույն որակավորման կոմիտեին վերապահված բարձրագույն կրթության և գիտության բնագավառների լիազորությունները Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին վերապահելուց և վերջինիս քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուց հետո՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Գիտության կոմիտեի ու Բարձրագույն որակավորման կոմիտեի քաղաքացիական ծառայողները պաշտոնները համալրում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում պահպանվում և հաշվի են առնվում քաղաքացիական ծառայողների նկատմամբ նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, աշխատանքի չներկայանալու ժամկետները, և պահպանվում են արձակուրդի իրավունքի իրացման համար հաշվարկվող աշխատանքային օրերը: